

ԵՊՀ ԻՄ ՈՒԽ 2011-2012 ուս. տարվա I կիսամյակի գործունեությունը

2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Մեպտեմբերի 21-ին՝ անկախության 20-ամյակին, կազմակերպվել են միջոցառումներ:
2. Իրականացվել է միջֆակուլտետային շախմատի մրցաշար:
3. Մասնաճյուղի սպորտային ակտիվից կազմվել է վոլեյբոլի՝ աղջիկների և տղաների հավաքական:
4. Տղաների վոլեյբոլի թիմը մասնակցել է ԵՊՀ ՈՒԽ-ի կողմից կազմակերպված վոլեյբոլի մրցաշարին և գրավել պատվավոր 2-րդ տեղը:
5. Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Նաիրի Ճաղարյանը կարդացել է զեկուցում՝ «ՀՀ տնտեսական իրավիճակը անկախությունից հետո և 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները» թեմայով:
6. Կազմակերպվել է կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը:
7. ՀՀԿ երիտասարդական թևի հետ համագործակցության միջոցով ապահովվել է բնագիտական ֆակուլտետի 10 ուսանողների մասնակցությունը Ծաղկաձորի եռօրյա սեմինարին:
8. Կազմակերպվել է Միսաք Մեծարենցին նվիրված գրական ցերեկույթ:
9. Անց է կացվել «Հույզեր և գույներ» թեմայով քննարկում:
10. Իրականացվել են «Վահան Տերյանի կյանքը», «Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործությունները» թեմաներով գրական ցերեկույթներ: